ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

ԵԴ2/8506/02/25 ք. Երևան
25 Օգոստոսի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

Դատարանի 20.08.2025թվականի որոշմամբ վերադարձվել է «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության և երրորդ անձ «Դավթյան» ՍՊ ընկերության՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2025թվականին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 2025 թվականի օգոստոսի 1-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ և 3-րդ կետերն անվավեր ճանաչելու, ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել պարտավորեցնելու, ՀՀ ֆինանսների նախարարությանը «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունել պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցվորի ներկայացուցիչը վերացրել է հայցադիմումի թերությունները և այն կրկին

21.08.2025թվականին ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության և երրորդ անձ «Դավթյան» ՍՊ ընկերության՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2025թվականին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 2025թվականի օգոստոսի 1-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ և 3-րդ կետերն անվավեր ճանաչելու, /որոնցով համապատասխանաբար սահմանվել են «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության և «Դավթյան» ՍՊ ընկերության հայտերի գնահատականները և ընթացակարգի հաղթող/ընտրված/ մասնակից է ճանաչվել «Դավթյան» ՍՊ ընկերությունը/, ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել պարտավորեցնելու, ՀՀ ֆինանսների նախարարությանը «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունել պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունից պետք է պահանջել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2025թվականին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 2025 թվականի օգոստոսի 1-ի նիստի թիվ 4 արձանագրության հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության և երրորդ անձ «Դավթյան» ՍՊ

ընկերության՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2025թվականին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 2025 թվականի օգոստոսի 1-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ և 3-րդ կետերն անվավեր ճանաչելու, ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերությանը «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել պարտավորեցնելու, ՀՀ ֆինանսների նախարարությանը «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊ ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունել պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.ՀՀ ֆինանսների նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.06.2025թվականին հայտարարված «ՀՀ ՖՆ-ԲՄԾՁԲ-25/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 2025 թվականի օգոստոսի 1-ի նիստի թիվ 4 արձանագրության հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by NAIRA AVETISYAN